



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



✓

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՈՅ

ՄԱՆՉԷՍԹԸՐ



Տպարան Գ. ՄԻՍԱԿ — ՓԱՐԻՉ

1901

6782
6782 ռ. Կ.

ԳԳԳԳԳԳԳԳ

ՅՈՒՅՆ ԵՊԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ



ՀԻՄՆՈՒ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՈՑ

ՄԱՆՉԷՍԹԸՐ



Տպարան Գ. ՄԻՍԱԲ ՓԱՐԻԶ

1901

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՈՑ


Մ Ա Ն Ձ Է Ս Թ Ը Ր

1. — Տեղւոյս Ս. Երրորդութիւն եկեղեցին կառուցուած Հայաստանեայց եկեղեցւոյ պատկանող Մանչէսթըրի ազգայնոց նուէրներով կը մատակարարուի տեղւոյս Հայ գաղթականութեան կողմանէ, որ բացարձակապէս անկախ է՝ ընդհանրապէս իր բոլոր ներքին վարչական, տնտեսական եւ այլ գործոց անօրինութեան մէջ, եւ մասնաւորապէս իր հողեւոր հովուին կամ պաշտօնէից ընտրութեան մէջ. միայն ըստ կրօնականին ենթակայ ճանաչելով ինքզինքն Ս. Էջմիածնայ Մայր Աթոռոյ ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի իրաւասութեան:

ՔՈՒՔԱՐԿՈՒՔ

2. — Քուէ տալու իրաւունք կ'ունենայ եւ ընդհանուր ժողովոյ անդամ կը համարուի 21 տարին լրացուցած եւ Անգլիոյ մէջ հաստատուած իւրաքանչիւր անձ, որ տեղւոյս ազգային եկեղեցւոյ տարեկան առ նուազն մէկ անգլիական ոսկիի տուրքը գէթ տարիէ մը ի վեր վճարած է:

3. — Ֆիւմաի (Firm) մը կամ ընկերութեան մը կողմանէ



տրուած տարեկան տուրքն մի միայն մէկ քուէի իրաւունք կուտայ նոյն ֆիումաին կամ ընկերութեան, որքան ալ մեծ ըլլայ տրուած տուրքին գումարը:

4. — Եկեղեցւոյ թոշակաւոր պաշտօնեաներն թէ հոգեւորական եւ թէ աշխարհական, ընդհանուր ժողովոյ մէջ ո՛չ քուէի իրաւունք եւ ո՛չ ալ ձայն կրնան ունենալ, իրենց անձնականին կամ պաշտօնին վերաբերող խնդիրներու մէջ:

5. — Որ եւ է քուէարկու եթէ չ'կարենայ բանաւոր պատճառով մը ընդհ. ժողովոյ ներկայ գտնուիլ, կարող է իր քուէի իրաւունքը յանձնել ուրիշ ժողովականի մը, ատենապետին ուղղուած նամակով մը: Որ եւ է քուէարկու 4 քուէէ աւելի քուէի փոխանորդութիւն չ'կրնար ստանձնել:

6. — Ընդհանուր ժողովին կը նախագահէ տեղւոյս Հոգեւոր Հովիւը, ի բաց առեալ թիւ 4րդ յօդուածի պարագան:

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ

7. — Ընդհանուր ժողով գումարուած կ'ըլլայ երբ տարեկան կանոնական տուրքը վճարող տեղւոյս ազգայիններն որ եւ է եկեղեցական, տեղական կամ վարչական խնդրոց համար կը համախմբուին: Ընդհ. ժողովոյ մէջ օրակարգէ դուրս որ եւ է խնդիր չկրնար վճռուիլ:

8. — Ընդհ. ժողովոյ ատեանն միայն այն ատեն կրնայ օրինաւորապէս բացուիլ, երբ քուէ տալու իրաւունք ունեցողներէն առ նուազն 20 անհատ անձամբ ներկայ կը գտնուին: Ժողովոյ որոշումներն ձայնից առաւելութեամբ կը տրուին, ու մի միայն ընդհ. ժողովով կրնան բեկանիլ: Քուէից հաւասարութեան պարագային, ատենապետն երկու ձայնի իրաւունք կ'ունենայ:

9. — Ընդհ. ժողովն նախ կը ձեռնարկէ ատենապետի մը, փոխ ատենապետի մը, ու ատենադպրի մը ընտրութեան, որոնց պաշտօնը կը տեւէ 5 տարի եւ վերընտրելի են: Ասոնց կը պատկանի ի պահանջել հարկին ընդհանուր ժողով հրաւիրել, օրակարգն պատրաստել եւ ներկայացնել, ու ժողովին որոշումներն գրաւոր կերպով հաղորդել ուր որ պէտք է:

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԵՒ ՎՃԻՌՆ

10. — Ընդհանուր ժողով կը գումարուի նախ՝ երկու տարին մի անգամ հոգաբարձուներու պաշտօնավարութեան շրջանի վերջերն, հրաժարող մարմնոյ համարատուութիւնն ընդունելու եւ նոր հոգաբարձութիւն ընտրելու համար: Երկրորդ՝ երբ մի այնպիսի կարեւոր խնդիր ծագի, որոյ որոշումն կամ լուծումն վարչական մարմինն իր կարողութենէ եւ իր ձեռնհասութենէ վեր համարի: Երրորդ՝ քուէարկու անդամներու առ նուազն տասներկուքը, եկեղեցւոյ վերաբերեալ կամ որ եւ է կարեւոր խնդրոյ համար իրենց ստորագրութեամբ ատենապետին դիմեն:

11. — Ընդհ. ժողովը մինակ կրնայ ընտրել եւ կամ հրաժարեցնել իր Հոգեւոր Հովիւն, եւ ժողովէն դուրս ո՛չ ոք իրաւունք կրնայ ունենալ ընտրութեան կամ հրաժարման դործերու մէջ միջամուխ ըլլալու: Տեղւոյս Հոգեւոր Հովիւին ընտրութիւնն ընդհ. ժողովին կողմանէ ընդունուելէ յետոյ, ընտրուած եկեղեցականին հոգեւոր իշխանութենէ կը խնդրուի իւր առաքումն, եւ նոյնը տեղեկագրուելով ընդհանուր Հայոց Վեհ. կաթողիկոսին, օրհնութեան կոնդակ կը խնդրուի:

12. — Տեղւոյս Հոգեւոր Հովիւն կ'ընտրուի հինգ

տարւոյ համար միայն, սկսեալ իր գալուստէն: Յ'աւարտ հինգ տարւոյ վերընտրելի է:

13. — Հոգաբարձութիւնը պարտի հինգ տարւոյ աւարտումէն գոնէ վեց ամիս առաջ գրաւոր ազդարարութիւն տալ Հոգեւոր Հովուին՝ թէ պաշտօնավարութիւնն կ'աւարտի. ապա պէտք է անմիջապէս ընդհ. ժողով գումարուի եւ նորոգ ընտրութիւն կատարուի:

14. — Թէպէտ Հոգեւոր Հովուի պաշտօնավարութիւնը հինգ տարի տեւել սահմանեալ է. սակայն ընդհ. ժողովը իրաւունք ունի պայմանաժամին լրումէն առաջ, որ եւ է բանաւոր դատած պատճառի համար հրաժարեցնել զանիկա իր պաշտօնէն, վեց ամսեայ գրաւոր ազդարարութեամբ: Միւս կողմանէ Հոգեւոր Հովուն ալ՝ իրեն սեպհական անձնական պատճառներով կարող է հրաժարիլ, դարձեալ վեց ամսեայ գրաւոր ազդարարութիւն տալով հոգաբարձութեան:

15. — Ընդհանուր ժողովը ազատ է ընտրել իր Հոգեւոր Հովուին որ եւ է թեմէ կամ միաբանութեանէ, սակայն այդ թեմը կամ միաբանութիւնը՝ ատով որ եւ է իրաւասութիւն կամ միջամտութեան իրաւունք չեն կրնար ունենալ: (Տես յօդուած 1):

ՏԵՂԻՈՅՍ ԿԼԵՐԻՆ ՊԱՐՏԻՔՆ ՈՒ ԻՐԱԻՈՒՆՔԸ

16. — Տեղւոյս Հոգեւոր Հովուին զուտ կրօնական խնդիրներու մէջ պարտի հետեւել Ս. Էջմիածնայ Մայր Աթոռոյ ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի հրահանգաց, եւ արտօնութիւն չ'ունի որ եւ է փոփոխութիւն ներմուծել Հայաստանեայց եկեղեցւոյ ծէսից եւ սովորութեանց մէջ:

17. — Հոգաբարձութիւնը եթէ պէտք տեսնէ կ'արտօնէ

իր Հոգեւոր Հովուին այցելել Անգլիոյ միւս քաղաքաց մէջ բնակող եւ եկեղեցական զուրկ գտնուող ազգայիններուն, եւ ասոր համար ալ ըլլալիք ծախքերն կը վճարէ եթէ արժան դատէ:

18. — Տեղւոյս Հոգեւոր Հովուը երբէք ազատ չ'է առանձինն, ըստ կամի, որ եւ է տնօրինութիւն մը ընելու, եւ կամ իր պաշտօնէն բացակայ գտնուելու՝ առանց հոգաբարձութեան կանխաւ գիտութեան եւ հաւանութեան: Ամեն բանի համար եւ ամեն պարագայի մէջ՝ Հոգեւոր Հովուին պարտի հոգաբարձութեան հետ խորհրդակցել եւ ըստ այնմ գործել: Եթէ ստիպողական եւ բանաւոր պատճառաւ մը անոր բացակայ գտնուելն հարկ ըլլայ, պէտք է որ գրաւորապէս ծանօթացնէ հոգաբարձութեան եւ անոնց հաւանութիւնն ստանայ, ի բաց առեալ՝ երբ զուտ կրօնական պէտք մը ստիպողաբար կը պահանջէ իր բացակայիլը:

19. — Տեղւոյս Հոգեւոր Հովուին ըստ նուիրապետութեան, եկեղեցւոյ աւագ պաշտօնեայն է, անոր կը պատկանի տեղւոյս եկեղեցւոյ մէջ կրօնական ամեն տնօրինութիւն եւ կարգադրութիւն՝ Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց եւ աւանդութեանց սահմանին մէջ, եւ ո'չ ոք կրնայ ուղղակի միջամտել կամ խանգարել անոր տնօրինութիւններն, այլ՝ որ եւ է գիտողութիւն կամ առարկութիւն պէտք է ուղղուի հոգաբարձութեան, որուն անկ է պարտ ու պատշաճն գործադրել: (Տես յօդուած 10):

20. — Տեղւոյս եկեղեցւոյ մէջ ի սէր քրիստոնէութեան սպասաւորողներն պարտին եկեղեցւոյ արարողութեան ժամանակ համակերպիլ Հոգեւոր Հովուին հրահանգաց:

21. — Ընդհ. ժողովոյ հաւանութեամբ եւ որոշմամբ, հոգաբարձութիւնը տեղւոյս Հոգեւոր Հովուին կը վճարէ իր պաշտօնավարութեան ի վարձատրութիւն, ամսական, կամ տարեկան որոշ սոճիկ մը. ասկէ զատ կահաւորեալ

բնակարան, լոյս, ածուխ եւ ջուր հոգաբարձութեան միջոցաւ ձրխարար կը հայթայթուին իրեն: Մկրտութեան, պսակի, թաղման եւ այլ արարողութիւններ ձրի կը լինին:

22. — Տեղւոյս Հոգեւոր Հովիւն երբէք իրաւունք չ'ունի իրեն հովուական եւ կրօնական պաշտօնէն դուրս, որ եւ է առեւտրական գործերով զբաղիլ, եւ առանց հոգաբարձութեան հաւանութեան որ եւ է հանդանակութիւն ընել:

ՎԱՐՉԱՎԱՆ ՄԱՐՄԻՆ ԿԱՄ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՔ

23. — Տեղւոյս Հայոց եկեղեցին եւ առաջնորդարանի բոլոր գործերն կը կառավարուին ընդհանուր ժողովոյ կողմանէ ընտրեալ վարչական մարմնոյ մը ձեռամբ, որք կը կոչուին հոգաբարձութիւն, եւ կը բաղկանան մի գանձապետէ եւ երկու հոգաբարձուներէ: Ասոնց ամենքն ալ հաւասար ձայն ունին վարչութեան մէջ: Հոգաբարձութիւնը կ'ընտրէ իր մէջէն գանձապետը:

24. — Հոգաբարձուներու պաշտօնն կը տեւէ երկու տարի (Տես յօդուած 10) եւ վերընտրելի են: Հրաժարեալ հոգաբարձութիւնը պէտք է շարունակէ իր պաշտօնը մինչեւ նոր հոգաբարձութեան ընտրութիւնը:

25. — Հոգաբարձութեան նոր ընտրութենէ զէթ եօթը օր առաջ, ընդհ. ժողովոյ ատենապետն եւ ատենադպիրն պէտք է որ ինն ընտրելիներու անուանց ցուցակ մը յղեն ընտրողաց, որպէս զի ատոնցմէ երեք հոգաբարձուներու համար քուէ տայ ընտրողը. սակայն ընտրողն իրաւունք ունի այս ցուցակէն դուրս եղող եւ ընտրելի ըլլալու պայմաններու մէջ գտնուող ո եւ է անձի համար քուէ տալու:

26. — Հոգաբարձութեան անդամք պէտք է որ գործով

Մանչէսթըրի մէջ հաստատուած ազգայիններէն ընտրուին: Ընտրելիութեան իրաւունք ունին այն անհատներն՝ որոնք տարեկան առ նուազն երեք (3) օսկի տուրք կը վճարեն, եւ հինգ տարի բնակած են Մանչէսթըրի մէջ:

27. — Հոգաբարձութիւն անհատապէս եւ թէ հաւաքապէս համարատու են մի միայն ընդհանուր ժողովոյ առջեւ: Հոգաբարձութեան ընթացքին նկատմամբ դիտողութիւն ունեցողներն, պարտին ընդհանուր ժողովոյ դիմել: (Տես յօդուած 10):

28. — Հոգաբարձութիւնը պարտի իրեն յատուկ կնիք մը ունենալ՝ իր ամբողջ պաշտօնական գրութեանց գործածելու համար:

29. — Գանձապետի պաշտօնն է եկեղեցւոյ տարեկան տուրք վճարող տեղւոյս եւ անդլիաբնակ ազգայիններէն տուրքերն գանձել ժամանակին, ու ջանադիր ըլլալ գտնելու եկեղեցւոյ եկամուտն աւելցնելու միջոցներ, դիմելով թէ տեղւոյս՝ թէ ուրիշ անդլիաբնակ եւ թէ այցելու ազգայիններուն, անոնցմէ նուէրներ հաւաքելու համար: Հաւաքուած դրամը որոշուած դրամատունն յանձնել իսկոյն, եւ տարւոյ վերջը ծախքերէ աւելցած գումարը բարդել պահեստի գումարին:

30. — Հոգաբարձութիւնը պարտի կանոնաւոր ամար մը ունենալ՝ իր ամբողջ որոշմանց եւ գործառնութեանց արձանագրութեանը համար, եւ պահել իր թղթակցութեանց պատճէններն, եւ ի լրանալ իր պաշտօնավարութեան՝ յանձնել զանոնք իր յաջորդին:

31. — Հոգաբարձութիւնը պարտի միշտ ի ձեռին ունենալ տեղւոյս եկեղեցւոյ եւ առաջնորդարանի պատկանող ամբողջ գոյքերու մէկ ցուցակը (inventory), որուն մէջ պէտք է ամեն ինչ մանրամասնօրէն նշանակուած ըլլայ, այսինքն, սուրբ գրեանք, խաչ, պատկեր, սկիհ, խաչկալ,

չուրջառ, արծաթեղէն, եկեղեցւոյ պատկանող կահ կարասի, առաջնորդարանի մէջ գտնուած զանազան գիրքեր, գրքատուն, տան կահ կարասի եւ այլն եւ այլն. վերջապէս ամեն ինչ որ եկեղեցւոյ եւ առաջնորդարանի կը պատկանի :

32. — Եկեղեցւոյ եւ առաջնորդարանի պատկանող ամբողջ գոյքերն եւ անոնց մի ցուցակը՝ (inventory), հոգաբարձութիւնը կը յանձնէ տեղւոյս Հոգեւոր Հովուին, որ պատասխանատու է անոնց բարւոք եւ անվթար պահպանման համար ու պարտաւոր ի պահանջել հարկին վերադարձնելու զանոնք ամբողջապէս հոգաբարձութեան :

33. — Հոգաբարձութիւնը արտօնեալ չ'է առանց ընդհանուր ժողովոյ հաւանութիւնը առնելու՝ սովորականէն դուրս որ եւ է նոր ծախքի յատկացնել առ առաւելն (30) երեսուն ոսկիէն աւելի գումար մը :

34. — Հոգաբարձութիւնը պարտի իւրաքանչիւր տարի իր ելեւմտից հաշիւը ներկայացնել գրաւորապէս բոլոր սուրք սուղոյներուն :


35. — Հոգաբարձութիւնը պարտի եկեղեցւոյ եւ առաջնորդարանի շէնքն եւ ամբողջ գոյքերն պատշաճ գումարով մը վստահելի ընկերութեան մը ապահովագրել, եւ տարեկան վճարումներն ժամանակին կանոնաւորապէս ընել :

36. — Եկեղեցւոյ պահեստի դրամը շահաւորելու եղանակը կ'որոշուի ընդհանոր ժողովով, եւ հոգաբարձութիւնը այդ որոշումը կը գործադրէ :


37. — Եթէ հոգաբարձութեան ո եւ է մէկ անգամը առժամապէս բացակայի, պարտի փոխանորդ մը նշանակել՝ հաւանութեամբ իր պաշտօնակցաց :

38. — Եթէ հոգաբարձութեան անդամներէն մէկը իր պաշտօնին լրումէն առաջ հրաժարի, մնացեալ երկու անդամներն կարող են Ընդհանուր ժողովոյ ատենապետին

եւ ատենադպրին հետ բացառիկ նիստի մը մէջ նոր ընտրութիւն ընել պակսող անդամին տեղն, բայց եթէ երկու անդամներ հրաժարին, այդ պարագային ընդհանուր ժողով գումարուելով նոր ընտրութիւն կատարելն հարկ է :



Ներկայ կանոնագիրն բարեփոխութեան ենթակայ է իւրաքանչիւր չորս տարին անգամ մը :




Սոյն կանոնագիրն վաւերացուած եւ հաստատուած է 27 Յուլիս 1901ին գումարուած Ընդհանուր ժողովով :



6782 p ^{low}

Impr. «Hamalsaran» - B. MISSAC, 4 rue, Ortolan - PARIS



р. У.

№ 6782